

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА

ФОНД «ШИРАКСКИЙ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМ.
М. НАЛБАНДЯНА»



REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

«M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF
SHIRAK» FOUNDATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱՐԱՄ

3126, г. Гюмри, ул. П. Севака 4,
тел. (0312)2-71-99

3126, ք. Գյումրի, Պ. Սևակի 4, հեռ. (0312)2-71-99

E-mail: info@shsu.am www.shsu.am

3126, Gyumri, str. P. Sevak 4,
tel. (0312)2-71-99

01-24 № 89

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
նախագահ, մ. գ. դ., պրոֆեսոր Ա. Օ. Թովուզյանին

17. 02 2026թ.

Հարգելի տիկին Թովուզյան,

Ի պատասխան Ձեր 05.02.2026թ.-ի N22/08.1.6-242 գրության Ձեզ ենք ներկայացնում Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեմայով ԺԳ.00.02- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (քիմիա)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ առաջատար կազմակերպություն հանդիսացող «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարծիքը:

Հարգանքով

ՇՊՀ-ի ղեկավար

Ե. Սերոբյան

«Հաստատում եմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի

ռեկտոր Ե. Սերբյան

« 14 »

2026թ.



Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նաիրա Արայի Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է ԺԳ.00.02՝ «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա(քիմիա)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Թեմայի արդիականությունը

Հասարակական կյանքի բոլոր ոլորտների աստիճանական թվայնացումը նոր խնդիրներ է առաջադրում դպրոցներին սովորողների լրացուցիչ կրթության, նրանց ազատ ժամանակի կազմակերպման, բնագիտամաթեմատիկական, հասարակագիտական առարկաներից գիտելիքների, կարողությունների զարգացման ուղղությամբ: Այդ համատեքստում ժամանակակից դպրոցն ակտիվորեն իրականացնելով կրթական բարեփոխումները կարիք ունի կրթության մի շարք ոլորտներում նոր հետազոտությունների իրականացման, որոնք կարող են ուղենիշ հանդիսանալ սովորողների մասնագիտական նախակարողունակությունների զարգացման և աշխատանքային գործունեության նախապատրաստման համար:

Այդ ոլորտներից մեկը քիմիան է:

Կատարված հետազոտության հիմնախնդիրը պայմանավորված է կրթության արդիականացման ժամանակակից համատեքստում սոցիալմանկավարժական, գիտատեսական և մեթոդական մակարդակներում բացահայտված հակասությունների լուծմամբ, որով պայմանավորված է թեմայի ընտրությունը «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում»:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է եղել հանրակրթական հիմնական դպրոցում քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման մեթոդական համակարգի մոդելի և ծրագրի մշակումն ու փորձարարական հիմնավորումը:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Իրականացնել հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականության և հայեցակարգային մոտեցումների վերլուծություն, որը մեթոդական հիմք կհանդիսանա քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման համար:
2. Բացահայտել և բնութագրել քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման սկզբունքները, առանձնահատկությունները և օրինաչափությունները:
3. Մշակել փորձարարական հետազոտությամբ ստուգել և հիմնավորել քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման մեթոդական համակարգի մոդելը, որը կներառի հայեցակարգային, կազմակերպական- գործնական, մեթոդական- տեխնոլոգիական և ակնկալվող վերջնարդյունքային բաղադրիչները իր ենթաբաղադրիչներով՝ պարապմունքների բովանդակությունը (թեմատիկ ծրագիրը) իրականացման սկզբունքները, օրինաչափությունները, ձևերը, ուղիները, միջոցները, մեթոդները, տեխնոլոգիաները ինտելեկտուալ զարգացնող օլիմպիական, խմբային նախագծային աշխատանքները, գործնական տարբերակված առաջադրանքները:
4. Սահմանել սովորողների քիմիական գիտելիքների յուրացվածության և նախագծային, հետազոտական կարողությունների ձևավորվածության չափանիշները, ցուցանիշներն ու մակարդակները:
5. Մշակել և առաջարկել մանկավարժական պայմանների համալիր, որը կապահովի մշակված մեթոդական համակարգի մոդելի արդյունավետ գործարկումը:

Դրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտությունների տեսական, փորձարարական մեթոդները, այդ թվում՝ մանկավարժական դիտում, զրույց, սոցիալացում, անկետավորում, մանկավարժական փորձարարություն՝ արձանագրող, ձևավորող, ստուգող-հավաստող, ստացված փորձարարական տվյալների մաթեմատիկական մշակման և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության բազա են հանդիսացել Երևանի թիվ 89, 155, 167, 181 հանրակրթական հիմնական դպրոցները:

Աշխատանքի նորույթը և գործնական նշանակությունը

Գրախոսվող աշխատանքը ծավալուն հետազոտություն է, որում նորովի են սահմանվել «արտաուսումնական գործունեություն և արտադասարանական պարապմունք հասկացությունները»: Բացահայտվել և հիմնավորվել են քիմիայի արտադասարանական պարապմունքների արդյունավետ կազմակերպման առանձնահատկությունները, սկզբունքները, օրինաչափությունները, ձևերն ու ուղիները: Սահմանվել են սովորողների քիմիական գիտելիքների յուրացվածության և նախագծային հետազոտական կարողությունների ձևավորվածության չափանիշները, ցուցանիշներն ու մակարդակները:

Կատարված հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ հայեցակարգային մակարդակում մշակվել են քիմիայի արտադասարանական պարապմունքների իրականացման, կազմակերպման տեսական, մեթոդաբանական և մեթոդական հիմքերը:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ մշակված քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման մեթոդիկա համակարգը կարող են գործնական օգուտ բերել ինչպես հիմնական դպրոցների քիմիայի ուսուցիչներին, այնպես էլ արտադասարանական պարապմունքների ղեկավարներին՝ դրանց կազմակերպման գործում:

Ատենախոսության մեջ ստացված արդյունքների մի մասը՝ մասնավորապես քիմիայի արտադասարանական պարապմունքներին ՏՏՏ միջոցների կիրառման մոդելը կարող է գործնական օգնություն լինել հիմնական դպրոցների քիմիայի ուսուցիչներին:

Աշխատությունում տեսական և գործնական առումներով հիմնավորվում է այն միտքը, որ քիմիայի ուսուցումն առավել արդյունավետ է, երբ այն անցնում է ոչ միայն դասագրքերին և դասասենյակին սահմանափակված ձևով, այլև լրացվում է հետաքրքրաշարժ, աշակերտակենտրոն, փորձարարական և ստեղծագործական գործունեությամբ:

Ատենախոսության հեղինակն աշխատանքի առաջին գլխում հետևողականորեն ներկայացնում է արտադասարանական պարապմունքների դերը աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման, ինքնուրույն աշխատանքի հմտությունների զարգացման, ինչպես նաև ստեղծագործական և քննադատական մտածողության ձևավորման գործում: Պետք է առանձնացնել այն, որ աշխատության այդ գլխում մանրամասն ուսումնասիրված են արտադասարանական գործունեության կազմակերպման օրինաչափությունները և սկզբունքները, պարապմունքների կազմակերպման տեսակները, ձևերն ու մանկավարժական պայմանները:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված է քիմիայի արտադասարանական պարապմունքների բովանդակությունը, դրա արդյունավետ իրականացման մոդելի կառուցվածքը, որն արժանի է դրական գնահատականի և գիտականորեն հիմնավորված է:

Կատարված հարցումների արդյունքները և փորձարարական աշխատանքների իրականացումը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով ապահովելու սովորողների քիմիական, նախագծային, ռեֆլեքսիվ մտածողության, հետազոտական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողունակությունների զարգացումը, լաբորատոր փորձերի կատարման, քիմիական նյութերից օգտվելու, օլիմպիական խնդիրներ լուծելու հմտությունների ձևավորումը:

Մշակված մոդելը կառուցվածքային առումով տրամաբանական է և համակարգված:

Ընդհանուր առմամբ, իրականացված աշխատանքը կարելի է գնահատել որպես մեթոդապես հիմնավորված, արդիական և արդյունավետ նպաստող սովորողների գիտական մտածողության և ստեղծագործական ներուժի զարգացմանը:

Ներկայացված աշխատանքի վերաբերյալ չունենալով սկզբունքային առարկություններ, հարկ ենք համարում կատարել հետևյալ դիտարկումները.

1. Ատենախոսության գլուխների ավարտին կարելի էր ներկայացնել ամփոփումներ:
2. Աշխատանքում ներկայացված վերլուծությունը լիարժեք է և հիմնավորված, սակայն ցանկալի կլիներ նաև որոշակի առաջարկությունների ձևակերպում, որոնք կարող էին լրացուցիչ նպաստել թեմայի գործնական կիրառելիության ամրապնդմանը:

3. Ատենախոսության մեջ տեղ են գտել մի շարք ոճաբանական, լեզվաբանական և տեխնիկական բնույթի թերություններ և ոչ հայահունչ եզրույթներ: Առկա են կրկնվող եզրույթներ և տառասխալներ:

Եզրակացություն

Ն.Ա.Մանվելյանի «Քիմիայի արտադասարանական պարապմունքների կազմակերպման և իրականացման եղանակները հիմնական դպրոցում» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա(Քիմիա)» մասնագիտությանը:

Ատենախոսության կառուցվածքն ու հիմնական բովանդակությունն արտացոլված են ատենախոսության սեղմագրում, ինչպես նաև հրատարակված 7 աշխատանքներում:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են աշխատանքի նպատակից և համապատասխանում են հայցորդի առջև դրված խնդիրներին:

Կատարված ուսումնասիրությունների ծավալով, ստացված գիտական նորույթով, տեսական և գործնական նշանակությամբ աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ հեղինակը՝ Նաիրա Արայի Մանվելյանն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանին:

Աշխատանքը քննարկվել է 2026թ-ի փետրվարի 11-ին տեղի ունեցած կենսաբանության և քիմիայի, ինչպես նաև մանկավարժության ամբիոնների համատեղ թիվ 1 նիստում, որում ներկա էին կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ կ.գ.դ, պրոֆեսոր Ս.Ս. Ալեքսանյանը, կ.գ.թ., դոցենտներ Ն.Վ. Ադամյանը, Կ.Ռ. Պետրոսյանը, Ա.Ս. Ալեքսանյանը, Ա.Ֆ. Գրիգորյանը, Գ.Ռ. Օքսուզյանը, Ա.Ս. Խաչատրյանը, Լ. Ն. Սելբոնյանը, ք.գ.թ., դոցենտ Կ.Խ. Ավագյանը, ք.գ.թ., ասիստենտ Ա.Խաչատրյանը, ասիստենտներ՝ Կ.Ա. Գրիգորյանը, Թ.Ռ. Փանոսյանը և Ա.Ա. Բարսեղյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչ՝ մ.գ.թ., դոցենտ Լ.Ն.Ղուկասյանը, մ.գ.դ, պրոֆեսոր Ա.Ա.Մկոյանը, մ.գ.դ, պրոֆեսոր Ռ.Ա. Մարդոյանը, մ.գ.թ., դոցենտներ՝ Ն.Ն.Ադամյանը, Լ.Ն. Հակոբյանը, Մ. Ս.Կարապետյանը, Ն.Պ.Գրիգորյանը:

Կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ,
կ.գ.դ., պրոֆեսոր




Ս.Ալեքսանյան

Մանկավարժության ամբիոնի վարիչ,
մ.գ.թ., դոցենտ



Լ.Ղուկասյան

Կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ Ս.Ս. Ալեքսանյանի և
Մանկավարժության ամբիոնի վարիչ Լ.Հ. Ղուկասյանի ստորագրությունները
հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտական քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝  Կ.Պետրոսյան

16.02.2026թ.

